## ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

---

### ՕՐԱԿԱՐԳ

1. Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման նոր մոտեցումները և ընթացակարգերը:

   ***/զեկուցող՝ Ս. Սահյան- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ /***

2. Պետական հավաստագրերի հիման վրա հաշմանդամի սայլակ և լսողական սարքեր տրամադրելու գործընթացը, արդյունքները և տեսլականը:

   ***/զեկուցող՝ Ա. Հակոբյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ /***

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «DEAFSKILLS» միջազգային ասոցիացիայի միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրում:

4. Այլ հարցեր:

5. «Հավասար հնարավորություններ» խորագրով մրցույթի հաղթողների պարգևատրում:

6. Այցելություն հաշմանդամություն ունեցող անձանց ձեռագործ աշխատանքների ցուցահանդես-վաճառք (ՄԱԿ-ի գրասենյակ):

Հանբ./ 386-18
Հանբ./ 388-18
Հանբ./ 389-18
Հանբ./ 392-18

**Մասնակցեցին՝**

**Ա. Ասատրյանը՝** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

**Հ. Աբրահամյանը՝** Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության նախագահ

**Ա. Ալավերդյանը՝** «Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «ՈՒՆիսոն» հասարակական կազմակերպության նախագահ

**Գ. Գրիգորյանը՝** «Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպության նախագահ

**Ա.Աբրահամյանը՝** «Փրկություն» ՀԿ-ի նախագահ

**Լ. Ներսիսյանը՝** «Աստղիկ» հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ

**Ս.Մաղաքյանը՝** «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության նախագահ

**Ա. Հովհաննիսյանը՝** «Լռության ձայն» հասարակական կազմակերպության նախագահ

**Ա. Կեսոյանը՝** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ***ազգային հանձնաժողովի անդամների առաջարկությամբ*** նիստին մասնակցել են՝

**Ա. Սողոմոնյանը՝** ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, տարածքային կառավարման վարչության պետ

*(նախարարի առաջին տեղակալ Վ.Տերտերյանի առաջարկով)*

**Ս. Գրիգորյանը՝** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի ֆիզիկական դատիարակության քաղաքականության բաժնի պետ

*(նախարարի տեղակալ Խ. Ասրյանի առաջարկով)*

**Դ.Մելիք-Նուբարյանը՝** ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության քաղաքականության վարչություն պետի պաշտոնակատար

*(նախարարի տեղակալ Ս. Խաչատրյանի առաջարկով)*

**Ռ. Այվազյանը՝** ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչության փոխադրումների քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

**Ա. Մուրադյանը՝** ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ
*(նախարարի տեղակալ Մ. Մանուկյանի առաջարկով)*

**Մ.Սարգսյանը՝** «Հայաստանի կույրերի միավորում» հասարակական կազմակերպության նախագահի տեղակալ
*(ՀԿ-ի նախագահ Ա.Հակոբյանի առաջարկով)*

**Ա.Մելքոնյանը՝** «Հույսի կամուրջ» հաշմանդամ երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպության նախագահ

ՀՐԱՎԻՐՎԱԾՆԵՐ՝

**Ս. Իվանովը՝** «DEAFSKILLS» միջազգային ասոցիացիայի նախագահ
**Հ. Հունանյանը՝** «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի նախագահ
**Վ. Արամյանը՝** «Հայկական ճամբար» հաշմանդամների ՀԿ-ի համանախագահ
**Ռ. Ավագյանը՝** «Ագաթ» ՀԿ-ի ներկայացուցիչ
**Մ. Ավետիսյանը՝** «Ագաթ» ՀԿ-ի ներկայացուցիչ
**Ն. Շահվերդյանը՝** ՀՀ ԲՍՓ գործակալության պետի տեղակալ
**Ա. Մարտիրոսյանը՝** ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետ
**Ա. Սիմոնյանը՝** ՀՀ ԲՍՓ գործակալության համակարգող խորհրդատու
**Ա. Դանիելյանը՝** ՀՀ ԱՍՀ նախարարի մամլո քարտուղար
**Մ. Մալխասյանը՝** UNDP- ի ներկայացուցիչ
**Ա. Մալխասյանը՝** ժեստերի լեզվի թարգմանիչ
**Ա. Հակոբյանը՝** ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ
**Ա. Հայրապետյանը՝** ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ
**Հ. Մկրտչյանը՝** ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների հիմնահարցերի բաժնի առաջատար մասնագետ
**Ա. Նիկողոսյանը՝** Պարգևատրվող
**Ս. Մելքոնյանը՝** Պարգևատրվող
**Մ. Պարազյանը՝** Պարգևատրվող

Ս.թ. դեկտեմբերի 5-ին տեղի ունեցավ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հերթական նիստը, որը վարում էր Հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պարոն Ա. Ասատրյանը:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանն առաջարկեց մինչ ներկայացված օրակարգի 1-ին հարցին անդրադառնալը հնարավորություն տալ ՀՀ ԲՍՓ գործակալության համակարգող խորհրդատու Անուշ Սիմոնյանին ներկայացնել բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում տեղի ունեցող գործընթացները, տալ մասնագիտական պարզաբանումներ ՁԼՄ-ների, ոլորտի շահագրգիռ մարմինների կողմից վերջին շրջանում բարձրացվող հարցերին, ինչպես նաև վիճակագրական տվյալներ ներկայացնել 2017 թվականի ընթացքում իրականացվող բժշկասոցիալական փորձաքննությունների վերաբերյալ:

Պարոն Ա. Ասատրյանի առաջարկությամբ օրակարգը հաստատվեց և խոսքի հնարավորություն տրվեց տիկին Ա. Սիմոնյանին:

Տիկին Ա. Սիմոնյանը նշեց, որ բժշկասոցիալական փորձաքննություն ոլորտում 2017 թվականին տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, որի նպատակն է հստակորեն տարանջատել անձի հիվանդություն և հաշմանդամություն ունենալը, նրան տրամադրել ծառայություն հստակ գնահատված կարիքի հիման վրա: Տիկին Սիմոնյանը նշեց նաև, որ վերը նշված խնդրի լուծման համար ստեղծվել է աշխատանքային խումբ, որը, հաշվի առնելով բժշկագիտության մեջ մշակված նորագույն մոտեցումները, ֆունկցիաների միջազգային դասակարգիչները, վերամշակել և հստակեցրել է դեռևս 2013 թվականին ընդունված հիվանդությունների և անձի օրգանիզմի ֆունկցիաների խանգարման մեթոդական ուղեցույցը, որով սահմանազատվում է անձի հիվանդություն ունենալը և նրա օրգանիզմի որևէ ֆունկցիայի կայուն խանգարումը:

Տիկին Ա. Սիմոնյանը ներկայացրեց 2017 թվականի 10 ամիսների վերաբերյալ վիճակագրական տվյալներ, համաձայն որի՝ փորձաքննվել է 40 722 անձ, որոնցից շուրջ 80 տոկոսին սահմանվել է հաշմանդամություն, իսկ 20 տոկոսը՝ 9 931 անձ հաշմանդամության կարգավիճակ չի ստացել: Նա նաև նշեց, որ հաշմանդամության կարգավիճակ չստացած շուրջ 450 անձի համար, փորձնական ծրագրի շրջանակներում, կազմվել է վերականգնողական անհատական ծրագիր, որով վերջիններիս երաշխավորվել է ստանալ վերականգնողական բժշկական օգնություն «Աթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնում: Տիկին Սիմոնյանը նշեց, որ դեկտեմբերի 4-ի դրությամբ բուժում են ստանում շուրջ 110 անձ, իսկ 1000-ից ավել անձ հրաժարվել են բուժում ստանալ:

Տիկին Ա. Սիմոնյանը նշեց նաև, որ շատ է խոսվում այն մասին, որ ամբողջ աշխարհում հաշմանդամություն ունեցող անձանց թիվը շատ բարձր է, իսկ Հայաստանում այն կազմում է բնակչության ընդամենը 6.5-6.6 տոկոս: Ըստ տիկին Ա. Սիմոնյանի՝ դա կախված է այն հանգամանքից, թե ինչ համակարգային մոտեցմամբ, ինչ չափորոշիչներով և ինչ խնդիրների լուծման համար է անձին սահմանվում հաշմանդամություն:

**Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ պարոն Ս. Սահյանը, ով ներկայացրեց**

**բժշկասոցիալական փորձաքննության իրականացման նոր մոտեցումները և ընթացակարգերը:**

Պարոն Սահյանը նույնպես նշեց, որ առաջիկայում նախատեսվող փոփոխությունները միտված են անձի առողջական խնդրի և անձի հաշմանդամություն ունենալու հանգամանքի հստակ տարանջատմանը, ինչպես նաև հստակ ու հասցեական ծառայությունների մատուցմանը: Այս գործընթացի հստակ կազմակերպման համար զեկուցողը կարևորեց այն, որ առաջիկայում փոխվելու են անձի առողջական վիճակի մասին տեղեկատվություն ստանալու ընթացակարգերը, քանի որ հենց այս տեղեկատվության հավաստիությունն է ընկած հաշմանդամության սահմանման գործընթացի օբյեկտիվության, ինչպես նաև հաշմանդամության կարգավիճակ ստացած կամ չստացած անձի վերականգնման գործընթացի արդյունավետ կազմակերպման հիմքում:

Ըստ պարոն Ս. Սահյանի՝ նախատեսվում է անձի առողջական վիճակի մասին տեղեկատվություն ստանալ առցանց եղանակով՝ Հայաստանում ներդրված առողջապահության էլեկտրոնային համակարգի տվյալներից, ինչը նախ անձանց կազատի տարբեր բուժհաստատություններից համապատասխան փաստաթղթեր հավաքելու, բժշկասոցիալական փորձաքննարական հանձնաժողովներ դրանք ներկայացնելու հնարավոր քաշքշուկներից և ձգձգումներից, բացի այդ վերը նշված էլեկտրոնային համակարգից տեղեկատվությունը կստացվի ամբողջական և դասակարգված ձևով, որն ավելի արդյունավետ և հնարավորինս օբյեկտիվ կդարձնի անձի հաշմանդամության սահմանման գործընթացը:

Մյուս կարևոր նորամուծությունը, ըստ զեկուցողի, անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նոր փաստաթղթի՝ օգտաքարտի ներդրումն է, որով կստացվի ամփոփ տեղեկատվություն անձի օրգանիզմի որևէ ֆունկցիայի սահմանափակման, խանգարման և դրա աստիճանի վերաբերյալ:

Հաջորդ նախատեսվող նորամուծությունը, ըստ պարոն Ս. Սահյանի, այն է, որ անձի օրգաիզմի ֆունկցիայի խանգարումը և մարմնի կառուցվածքի խախտումը գնահատվելու է Առողջապահության Համաշխարհային Կազմակերպպության ֆունկցիաների միջազգային դասակարգիչների հիման վրա, այսինքն բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում կիրառվելու է նոր գործիքակազմ և փոխվելու է գործող ՀՀ կառավարության որոշումներում առկա չափորոշիչները ու հիմք է ընդունվելու ԱՀԿ-ի կողմից մշակված ֆունկցիաների միջազգային դասակարգիչները և դրանց ծածկագրերը: Պարոն Ս. Սահյանը համոզմունք հայտնեց, որ այս փոփոխությունները կնպաստեն նաև բժշկասոցիալական ոլորտում կայացված որոշումների օբյեկտիվությունը բարձրացնելուն և նոր ու ավելի հստակ հարթության վրա կդրվի նախ այդ որոշումների բողոքարկման մեխանիզմներն ու բողոքների հետ կապված հարցերի լուծումները: Պարոն Ս. Սահյանը կարևորեց նաև ԱՀԿ ՖՄԴ գործիքների ներդրումը այն տեսանկյունից, որ հնարավորություն է ընձեռնվում հստակ գնահատել անձի կարիքները և կարիքի հիման վրա հաշմանդամություն սահմանված կամ հաշմանդամության կարգավիճակ չստացած անձին տրամադրել հասցեական ծառայություն:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը շնորհակալություն հայտնեց պարոն Ս. Սահյանին զեկույցի հանգամանալից ներկայացման համար:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Հանձնաժողովի անդամ, հատուկ կարիքներով մարդկանց աջակցությամբ «Ունիսոն» ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Ալավերդյանը, ով նշեց, որ բարեփոխումների գործընթացում կարևորում է, որպեսզի անձն իր վրա դրանց անմիջական ազդեցությունը զգա, սակայն հայտնեց իր մտահոգությունը Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակի կրճատման հետ կապված: Պարոն Ա. Ալավերդյանը օրինակ բերեց ԱՀԿ-ի տվյալներն ըստ որի, ամբողջ աշխարհում հաշմանդամություն ունեցող անձիք կազմում են երկրագնդի բնակչության շուրջ 15 տոկոսը, իսկ Հայաստանում՝ բնակչության շուրջ 6 տոկոսը: Պարոն Ա. Ալավերդյանը նշեց նաև, որ հաշմանդամության կարգավիճակն իրենից ենթադրում է ոչ միային կենսաթոշակ կամ նպաստ, այլ նաև որոշակի այլ արտոնություններ, որոնք կարևոր են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական խնդիրների լուծման համար:

Հանձնաժողովի անդամ պարոն Ա. Ալավերդյանի ելույթին արձագանքեց տիկին Ա. Սիմոնյանը, ով ներկայացրեց, որ նման տոկոսային անհավասարության հիմքում ընկած է տարբեր երկրներում գործող հաշմանդամության սահմանման տարբեր մոտեցումները և չափորոշիչները:

Պարոն Ալավերդյանի ելույթին արձագանքեց նաև պարոն Ս. Սահյանը, նշելով, որ առաջիկա բարեփոխումները միտված են անձի կարիքների հստակ գնահատմանը և նախատեսվում է ծառայություն մատուցել նաև հաշմանդամության կարգավիճակ չստացած անձանց:

Պարոն Ա. Ալավերդյանի ելույթին արձագանքեց նաև Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը, ով նշեց, որ ներկայացվող բարեփոխումների փաթեթի նպատակը հաշմանդամության թվի կրճատումը կամ տրամադրվող ծառայությունների փաթեթների նվազեցումը չէ: Նա նշեց, որ առաջիկայում հստակեցված և կարիքների գնահատման հիմքով ծառայությունների տրամադրման գործընթացում ծանրության ուժը դեպի հասցեական և գնահատված կարիքի հիման վրա ծառայության մատուցումն է, ոչ թե տոկոսային որևէ հարաբերակցության պահպանումը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հարց ուղղեց նաև Հանձնաժողովի անդամ «Աստղիկ» ՀԿ-ի նախագահ պարոն Լ. Ներսիսիյանը, ով հետաքրքրվեց թե ինչ վերահսկողական մեխանիզմներ են ներդրվելու բարեփոխումների շրջանակներում, որպեսզի պարզ լինի արդյոք տրամադրված ծառայությունը հասցեական էր, անձը ստացավ պետության կողմից նախատեսվող ծառայությունը, և հատկապես անգործունակ հաշմանդամություն ունեցող անձանց պարագայում, որն է այն վերահսկողական մեխանիզմը, որ պետությունը ներդնելու է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լիարժեք և հստակ իրացման համար: Բացի այդ, նա հետաքրքրվեց, արդյոք կան հստակ մեխանիզմներ բժշկասոցիալական հանձնաժողովների կողմից ընդունված որոշումներն ավելի վերահսկելի դարձնելու տեսանկյունից:

Պարոն Լ. Ներսիսյանի հարցին արձագանքեց պարոն Ս. Սահյանը, ով կարևորեց քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ընդգրկվածությունը

բժշկասոցիալական փորձաքննություն ոլորտում իրականացվող գործընթացներում, այդ թվում նաև վերահսկողության տեսանկյունից: Պարոն Ս. Սահյանը նշեց նաև, որ գործող օրենսդրության համաձայն հասարակական կազմակերպությունները և բժիշկ-մասնագետները կարող են ներկա գտնվել անձի բժշկասոցիալական փորձաքննության գործընթացին: Անդրադառնալով հաշմանդամություն ունեցող անձին տրամադրված ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հարցին՝ պարոն Ս. Սահյանը կարևորեց վերականգնողական անհատական ծրագրերի դերի բարձրացումը և նշեց, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում կազմակերպվում են համապատասխան քննարկումներ այդ խնդրի համապատասխան լուծումները գտնելու նպատակով:

Հանձնաժողովի անդամ պարոն Լ. Ներսիսյանի հարցին արձագանքեց նաև Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը, ով նշեց, որ ծառայությունների տրամադրման գործընթացում պետք է հստակ տարանջատել՝ անձին տրամադրվող ծառայությունը նրա իրավունքն է, թե պարտականությունը: Միաժամանակ, պարոն Ա. Ասատրյանը նշեց նաև, որ եթե Հանձնաժողովը, ոլորտի շահագրգիռ այլ մարմինների հետ համատեղ քննարկման արդյուքում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կներկայացնի այնպիսի մոտեցում, ըստ որի, եթե անձը չի օգտվում իրեն երաշխավորված վերականգնողական ծառայությունից, ապա կարող է զրկվել որոշակի գործընթացների մասնակցելու իրավունքներից, մասնավորապես՝ վերափորձաքննության իրավունքից, ապա հնարավոր է նաև առաջիկա բարեփոխումների շրջանակներում այդպիսի մոտեցումները նույնպես քննարկել:

Մինչ օրակարգի 2-րդ հարցին անդրադառնալը հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ հաշմանդամություն ունեցող անձանց անհրաժեշտ վերականգնողական պարագաների, վերականգնման տեխնիկական միջոցների տրամադրման ձևաչափի հետ կապված հարցերը բազմիցս քննարկվել են նաև Հանձնաժողովի նիստի ընթացքում և նախարարությունը պատրաստակամ է օր առաջ հաշմանդամություն և սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել հասցեական և մատչելի ծառայություն, ինչի ապացույցը հաշմանդամի սայլակների և լսողական սարքերի տրամադրման գործընթացնում պետական հավաստագերերի տրամադրման համակարգի ներդրումն է:

Պարոն Ա Ասատրյանը նշեց, որ Հանձնաժողովի նիստերի ընթացքում հարց էր բարձրացվել պետական հավաստագրերի տրամադրման գործընթացը սկսել 2018 թվականից, սակայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ձեռնամուխ եղավ գործընթացի կազմակերպմանն ավելի վաղ և արդեն 2017 թվականից անձինքն կարողանում են իրենց կարիքների հիման վրա ստանալ իրենց հարմար, իրենց նախընտրելի հաշմանդամի սայլակը կամ լսողական սարքը՝ օգատգործելով պետական հավաստագրերի տրված հնարավորությունները:

**Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ տիկին Ա. Հակոբյանը, ով ներկայացրեց տեղեկատվություն պետական**

**հավաստագրերի հիման վրա հաշմանդամի սայլակ և լսողական սարքեր տրամադրելու գործընթացի վերաբերյալ:** Տիկին Ա. Հակոբյանը ներկայացրեց պետական հավաստագրերի հիման վրա հաշմանդամի սայլակ և լսողական սարքեր տրամադրելու գործընթացում ներգրավված բոլոր դերակատարների գործառույթները, որոնք սահմանված են ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն կառավարության որոշմամբ, ՀՀ ԱՍՀ նախարարի համապատասխան հրամաններով:

Տիկին Ա. Հակոբյանը ներկայացրեց նաև վիճակագրական տվյալներ կապված վերը նշված գործընթացի վերաբերյալ, ըստ որոնց պետական հավաստագրերի հիման վրա լսողական սարք տրամադրելու նպատակով որակավորվել և ՀՀ ԱՍՀ նախարարության հետ պայմանագիր է կնքել 5, իսկ հաշմանդամի սայլակ տրամարդելու նպատակով՝ 4 կազմակերպություն: Զեկուցող նշեց նաև, որ ս.թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում պետական հավաստագրերի հիման վրա տրամադրվել է շուրջ 150 հաշմանդամի սայլակ և շուրջ 200 լսողական սարք:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ կարծիք հայտնեց Հանձնաժողովի նիստին հրավիրված «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության ղեկավար պարոն Հ. Հունանյանը, ով ողջունեց պետական հավաստագրերի հիման վրա հաշմանդամի սայլակների և լսողական սարքերի տրամադրման գաղափարը և նշեց, որ անձի կարիքների բավարարման տեսանկյունից այս գործընթացը մի քանի քայլ առաջ է քան պետական գնումների համակարգում հաշմանդամի սայլակների և լսողական սարքերի տրամադրման գործընթացը:

Պարոն Հ. Հունանյանը, սակայն մտահոգություն հայտնեց, որ մարզերում բացակայում են համապատասխան սարքավորումներ (աուդիոմետրիա) լսողության խնդիրներ ունեցող անձանց լսողության ստուգման համար, ինչը լրացուցիչ խնդիրներ է առաջացնում հատկապես տարեց անձանց համար, ովքեր ցանկանում են ստանալ լսողական սարքեր և դրա համար ստիպված են հասնել Երևան:

Տիկին Հակոբյանը նշեց, որ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովների նիստերի ընթացքում քննարկվել է նմանատիպ սարքավորումների բացակայության խնդիրը և մարզպետարանների առողջապահության վարչությունների ներկայացուցիչները խոստացել են հարցը ուսումնասիրել և լուծումների տարբերակներ գտնել:

Նիստի արդյունքում որոշվեց՝

1. հանձնաժողովի անունից գրություն նախապատրաստել առողջապահության ոլորտի պատասխանատու մարմիններին տեղեկատվություն ստանալու համար, թե քանի մարզերում կա նմանատիպ սարքավորումներ,
2. ՀՀ առողջապահության նախարարությանը և մարզպետարանների համապատասխան պատասխանատուներին ներկայացնել պետական հավաստագերի հիման վրա լսողական սարքեր ստանալու գործընթացում առկա խնդիրը՝ ակնկալելով համապատասխան լուծումներ,
3. ստացված տեղեկատվությունը ներկայացնել Հանձնաժողովի անդամներին և շահագրգիռ կազմակերպություններին:

Այնուհետև, օրակարգի համաձայն ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «DEAFSKILLS» միջազգային ասոցիացիայի միջև: Հուշագիրը ստորագրվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պարոն Ա. Ասատրյանի և «DEAFSKILLS» միջազգային ասոցիացիայի նախագահ պարոն Ստանիսլավ Իվանովի կողմից:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը կարևորեց հուշագրի ստորագրումը, քանի որ «DEAFSKILLS» միջազգային ասոցիացիայի ջանքերն ուղղված են լսողության խնդիրներ ունեցող անձանց մասնագիտական կարողությունների հասարակական ընկալման բարձրացման և նրանց սոցիալական ներառման աջակցմանը, ինչը համահունչ է հաշմանդամության ոլորտում ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությանը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև «DEAFSKILLS» միջազգային ասոցիացիայի նախագահ պարոն Ս. Իվանովը, ով կարևորեց հուշագրի ստորագրումը և հույս հայտնեց, որ այն մեծապես կխթանի լսողության խնդիրներ ունեցող անձանց մասնագիտական կարողությունների զարգացմանը, զբաղվածության ապահովմանը և սոցիալական ներառմանը:

**Օրակարգի այլ հարցերի շրջանակներում քննարկվեցին մի քանի հարցեր:**

Հանձնաժողովի անդամ, «Ունիսոն» ՀԿ-ի նախագահ պարոն Ա Ալավերդյանը ներկայացրեց «Որոշումների կայացման գործընթացներում հաշմանդամություն ունեցող անձանց ներառման քաղաքականություն և ստուգաթերթ» հետազոտությունը և առաջարկեց այն ուսումնասիրել և անհրաժեշտության դեպքում որպես համապատասխան իրավական ակտ ներկայացնել ՀՀ կառավարություն:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը հանձնարարեց ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին ուսումնասիրել ներկայացված հետազոտությունը և ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

Հանձնաժողովի անդամ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի նախագահ պարոն Ս. Մաղաքյանի բարձրացված հարցը վերաբերում էր «**Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական** ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծին և հետաքրքրվեց, արդյոք Հանձնաժողովը կարող է որևէ ջանք գործադրել, որպեսզի նախագիծը հնարավորինս արագ ընդունվի ՀՀ Ազգային Ժողովի կողմից:

Պարոն Ս. Մաղաքյանը նշեց նաև, որ չնայած ունի որոշ անհամաձայնություններ նախագծի հետ կապված, սակայն պարաստ է իր բոլոր ջանքերը ներդնել օրենքի նախագծի օր առաջ ընդունման համար:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա Ասատրյանը նշեց, որ ՀՀ ԱԺ առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ընթացքում մեկ անգամ կազմակերպվել է քննարկում նախագծի վերաբերյալ և նախատեսվում է ևս մեկ մասնագիտական քննարկում և առաջարկեց առաջիկա նախատեսվող քննարկման մասնակից դարձնել նաև Հանձնաժողովի անդամներին: Պարոն Ասատրյանը նշեց նաև, որ նախագծի ընդունման քաղաքական

անհրաժեշտությունը գիտակցում են բոլորը, սակայն կան մասնագիտական հարցադրումներ, որոնք դեռևս պարզաբանման անհրաժեշտություն ունեն: Նա նշեց, որ առաջիկայում ՀՀ ԱԺ առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նստի մասին լրացուցիչ կտեղեկացվի հանձնաժողովի անդամներին:

**Օրակարգի հինգերորդ հարցը վերաբերում** էր «Հավասար հնարավորություններ» խորագրով մրցույթի հաղթողների պարգևատրմանը: Մրցույթը կազմակերպվել էր Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար 2016 թվականը հավասար հնարավորությունների տարի հայտարարելու և հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու կապակցությամբ անցկացվող միջոցառումների շրջանակներում, իսկ հաղթողներին որոշել էին Հանձնաժողովի անդամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ քվեարկության արդյունքում:

Հաղթողները պարգևատրվեցին ըստ հետևյալ անվանակարգերի՝

- **Կրթության և սոցիալական ծառայությունների մատչելիության և հասանելիության գործում ներդրած ջանքերի համար**- Արմինե Նիկողոսյան՝ «Փյունիկ» ՀԿ-ի Գյումրու մասնաճյուղի նախագահ
- **Զբաղվածության (այդ թվում անհատ ձեռներեցության և ձեռնարկատիրական գործունեություն) բնագավառում հավասար հնարավորությունների ստեղծման գործում ներդրած ջանքերի համար**- Սայյորա Այուպովա՝ «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի տնօրեն
- **Մշակույթի բնագավառում հավասար հնարավորությունների ստեղծման գործում ներդրած ջանքերի համար**- Ռաֆֆի Միքայելյան՝ «Փարոս» կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար
- **Սպորտի բնագավառում հավասար հնարավորությունների ստեղծման գործում ներդրած ջանքերի համար**- Սերյոժա Մելքոնյան՝ 2016 թ-ին «Բոչիա» սպորտաձևի բաց առաջնության հաղթող
- **Հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ներդրած ջանքերի համար**- Մարինա Պարազյան՝ «ՍՈՐՍ» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչ
- **Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության բնագավառում ներդրած ջանքերի համար**- Կարինե Գրիգորյան՝ «Ագաթ» հատուկ կարիքներով կանանց կենտրոն ՀԿ-ի նախագահ

Հանձնաժողովի անդամների առաջարկով հատուկ մրցանակ է սահմանվել Նարե Ալավերդյանին՝ **2016 թվականի ընթացքում ցուցաբերած անհատական ակտիվության համար:**

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը շնորհակալություն հայտնեց Հանձնաժողովի նիստի բոլոր մասնակիցներին և ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամին նիստի կազմակերպման աշխատանքներին աջակցելու համար, այնուհետև կազմակերպվեց այցելություն Երևանում ՄԱԿ-ի գրասենյակ՝ հաշմանդամություն ունեցող

անձանց ձեռագործ աշխատանքների ցուցահանդես-վաճառքին մասնակցելու նպատակով:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ԿԵՍՈՅԱՆ

11.12.2017թ